ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Սիրելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ:***

1) խոր-ոդավոր, նժդե-, հայթ-այթել
2) դժպատե-, խոր-ին, ընդ-ատակ
3) չնաշխար-իկ, ընդ-արվել, հեղ-եղատ
4) ժպիր-, օր-նանք, արհամար-ել

2 **Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Աստիճանաբար մոռանալով խառնիճաղան-(1) առօր-ական(2) հոգսերը և կտրվելով սրտմաշու-(3) ու տա-տկալի(4) մտքերից՝ Երեմ-ն(5) խաղաղ քուն մտավ: Ժու-կալ(6) մայրը բարեհոգի ժպիտով նայեց խա-շիկի(7) նմանվող իր որդուն, զգույշ վերցրեց մա-մարյա(8) ե-ոտանու(9) վրա դրված լաջվար-(10) զարդատուփը և դուրս եկավ սենյակից:

1) 1-ջ, 4-խ, 6-ժ, 7-փ
2) 1-ջ, 3-կ, 9-ռ, 10-դ
3) 2-ե, 4-խ, 7-փ, 8-ր
4) 2-ե, 5-յա, 6-ժ, 10-դ

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:**

1) ՌՈՒԲԻՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆ
2) ՍԱՏԱՆԱՅԻ ԿԱՄՈՒՐՋ, ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ, ՈՒՐԱՐՏՈՒԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
3) ԱԼՊՅԱՆ ԼԵՌՆԵՐ, ՆՈՐ ԳԵՏԻԿԱՎԱՆՔ, ՇԱՍԻՐԱՄԻ ԿԱԽՈՎԻ ԱՅԳԻՆԵՐ
4) ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԱ, ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ, ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) ակնկոր, քրմապետ, օժտվածություն
2) ամրոց, թանձրասաղարթ, ավշանյութ
3) դեռափթիթ, երկվություն, մրցել
4) պատրանք, դիմանկար, ուխտադրուժ

5 **Ո՞ր տառակապակցությունը թվային արժեք *չունի:***

1) ՃՅ
2) ԺԹ
3) ՐՆ
4) ԿԴ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն ճիշտ տեղադրված:**

1) ձեռն(ը)տու, ընկ(ը)րկել
2) դռ(ը)նբաց, տ(ը)րտմել
3) խ(ը)մբվել, կոթ(ը)նել
4) կ(ը)նճռոտ, գտ(ը)նվել

7 **Ո՞ր տարբերակում է *բոլոր կամուրջներն այրել* դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:**

1) ճակատամարտում հաղթել
2) հետդարձի ճանապարհ չթողնել
3) միշտ հարձակվողի դերում լինել
4) հնազանդվել ինչ-որ մեկին

8 **Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Ես (1. տեղի տվեցի, 2. տեղիք տվեցի) մորս հորդորներին և այլևս չանհանգստացրի այդ աղջկան:
բ. Նրա գերեվարության ու կուրացման մասին վկայությունները մեծ մասամբ վիպական ու հորինովի են և չեն կարող (1. հիրավի, 2. հավաստի) ու պատմական լինել:
գ. Սաստիկ այրող (1. խոյակ, 2. խորշակ) է փչում. կխփի, կխարկի արտ ու արոտ:
դ. Երկու (1. պնակ, 2. ըմպանակ) սուրճը հանգչում էր փոքրիկ սեղանին:

1) ա-1, բ-2, գ-1, դ-1
2) ա-1, բ-2, գ-2, դ-2
3) ա-2, բ-1, գ-2, դ-2
4) ա-2, բ-2, գ-2, դ-1

9 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) վճիտ-պղտոր, նենգ-ժպտադեմ, հնարամիտ-անճար
2) համերաշխ-գժտված, առինքնող-վանող, օրինաչափ-պատահական
3) պիղծ-սուրբ, գաճաճ-բարձրահասակ, ջրարբի-անջրդի
4) պատվարժան-անարգ, գեղատեսիլ-անհրապույր, եղեմ-դժոխք

10 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:**

1) **պատրանք**-հրապուրիչ, բայց խաբուսիկ հույս, **ծխնի**-ծխով հագեցած
2) **վիրապ**-խոր փոս, **խայտալ**-ուրախությունից թռչկոտել
3) **շեղբ**-դանակի կտրող մաս, **վարկած**-գիտական ենթադրություն
4) **ռահվիրա**-որևէ բանի սկզբնավորող, **սուտակ**-թանկարժեք քարի տեսակ

11 **Տրված բառերից որի՞ արմատին *չի* կարող միանալ *առ-* նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) անցյալ
2) հավիտյան
3) երևույթ
4) ողջույն

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդաձանցավոր:**

1) տնտեսուհի, հրակայուն, հանքաքար
2) հնամենի, վաթսունհինգ, զրախոս
3) կրծքանշան, թանկարժեք, պատմահայր
4) սրտմտանք, աշխարհակալ, դարակազմիկ

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) խաչակիր, վաչկատուն, վագր, վիպագիր
2) շիկամուկ, այգեգործ, կաթնասուն, պատճեն
3) սերմնացան, զորամաս, հերթապահ, հրձիգ
4) չափահաս, լրագիր, ծխամորճ, քարտաշ

14 **Ո՞ր շարքում տրված տեսակին *չպատկանող* դերանուն կա:**

1) այսքան, նույն, սրանք, մյուս-*ցուցական*
2) ուրիշ, ովքեր, որոշ, ոմն-*անորոշ*
3) յուրաքանչյուր, բոլոր, ամբողջ, համայն-*որոշյալ*
4) ոչ ոք, ոչ մի, ոչ մեկը, ոչինչ-*ժխտական*

15 **Ո՞ր նախադասության մեջ հոդի գործածության սխալ կա:**

1) Արքայադուստրը որսում էր նրա հայացքը. արբեցած էր նրանով:
2) Աստղերը արշալույսին չքացան, սուզվեցին անհունի մեջ:
3) Հանկարծ քույրն երևաց, ինձ տեսավ և կարծեց, թե հանդիմանելու եմ:
4) Երբ շնչելը դժվարացավ, Ալխոն հասկացավ, որ զառիվերն սկսվել է:

16 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ու* հոլովման:**

1) գինի, գարի, ոչ ոք, սպասել
2) մորթի, բարդի, ոգնի, պապ
3) կաղնի, ամուսին, պատանի, անկողին
4) որդի, կիրակի, ծերունի, քաղաքացի

17 **Ո՞ր շարքում են միայն պարզ ժամանակաձևեր:**

1) պետք է գնայի, մի՛ բեր, հարց կտամ
2) կգամ, չի մոռանա, պիտի հարցներ
3) վեր կացավ, հիշեցի, չեմ ների
4) վայր ընկավ, թույլ է տալիս, հավատացինք

18 **Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

1) Նա գնում էր մշուշով ծածկված ճամփեզրով՝ գլխահակ ու տխուր խորհելով եղածի մասին:
2) Վիշտը նրա մեջ խառնվել էր ուրախությանը:
3) Լույսը բացվելուն պես Արամը վերադարձավ յուրայինների մոտ:
4) Բարեկամս բնակվում էր այդ հեռավոր ու խուլ գյուղում:

19 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:**

1) բերել է, սովորելու եմ, չի գա, կերավ
2) կորել է, հասկացավ, հուսանք, չեմ հիշում
3) կային, չհուսահատվեցին, հմայել են, խնդրեց
4) չգրեր, խոսում եմ, գնացել էինք, մոտեցրի

20 **Ո՞ր շարքում ստորադասական շաղկապ *չկա:***

1) հետևապես, այնինչ, թեպետ, սակայն
2) այլև, որովհետև, իսկ, նաև
3) որտեղ, կամ, այլապես, այսինքն
4) որպեսզի, ապա, նույնպես, բայց

21 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Եթե տեսներ այն, ինչ ես էի տեսել, այդպես չէր վարվի:
2) Ազատ ժամանակ նրա հիմնական զբաղմունքը ընթերցելն է:
3) Մեքենան շուռ էր եկել, բայց բարեբախտաբար վիրավորներ չկային:
4) Այդ հին պատմությունը վաղուց էր մոռացության գիրկն անցել:

22 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Երբ երեխաներից մեկը հասավ լուսամուտին և սկսեց …….. թակել, Սողոմոնը, արագ …….. լուսամուտը, բռունցքի …….. վայր գլորեց ……..:

(1. բարձրանալ, 2. աղմուկ, 3. բաց անել, 4. հարված)

1) 4, 1, 2, 3
2) 2, 3, 4, 1
3) 4, 3, 1, 2
4) 2, 1, 4, 3

23 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Միասին կարդում էինք, միասին զբոսնում, և անհավատալի չպիտի լինի, եթե ասեմ, որ գրեթե միևնույն ձևով էինք խորհում միևնույն բանը:

1) 

2) 

3) 

4) 

24 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ** ***չկա:***

1) Ժողովուրդը ցնծագին բացականչություններով դիմավորեցին իրենց սպարապետին:
2) Որպես բժիշկ՝ նա հարգված էր, բայց նրան՝ որպես մարդ, այնքան էլ չէին սիրում:
3) Ուղեգրի արժեքի մեջ մտնում է նաև նախաճաշն ու ընթրիքը:
4) Մարիամը դստեր ու թոռների հետ հաճախ էր լինում թատրոնում:

25 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Դեզդեմոնա խաղալու էր Արուսը՝ այդ դերին հարմար եկող միակ դերասանուհին թատրոնում:*
Դեզդեմոնա խաղալու էր Արուսը, որը այդ դերին հարմար եկող միակ դերասանուհին էր թատրոնում:
2) *Մամուլը ոչինչ չէր կարող մերժել այդ մեկենասուհիներին՝ իր գոյությամբ պարտական լինելով նրանց ամուսինների նյութական օժանդակությանը:*
Մամուլը ոչինչ չէր կարող մերժել այդ մեկենասուհիներին, քանի որ իր գոյությամբ պարտական էր նրանց ամուսինների նյութական օժանդակությանը:
3) *Թուրքիայից փախած հայերը գալիս էին «Մշակի» խմբագրատուն:*
Հայերը, որոնք փախել էին Թուրքիայից, գալիս էին «Մշակի» խմբագրատուն:
4) *Դժվարությամբ համոզեցի Մկրտիչ Ջանանին հետաձգել իր վաղեմի ցանկության իրագործումը:*
Դժվարությամբ համոզեցի Մկրտիչ Ջանանին, որ հետաձգի իր վաղեմի ցանկության իրագործումը:

26 **Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:**

1) Նրանց վիշտը անթեղված կրակ էր, որ մերթ բոցավառվում էր որպես պայծառ հույս, մերթ դառնում մարմրին տվող տկար կայծ:
2) Մենք հասկացանք, որ պապս քաղաք է տանելու նաև պոչը ծաղիկ երինջին, որը մեր բոլորի սիրելին էր:
3) Նրանք պատմում էին մեր չարաճճի արարքների մասին, հիշում մեր մանկությունը:
4) Աշխատում էինք լուսաբացից մինչև իրիկուն, և մեզ թվում էր, թե մեր ընտանիքում ոչինչ չի պատահել:

27 **Ո՞ր նախադասության մեջ պատճառի պարագա *չկա:***

1) Պատճառ չունեմ քեզ չհարգելու:
2) Լեզվին լավ չտիրապետելով՝ դժվարանում էր հաղորդակցվել դրացիների հետ:
3) Ինչո՞ւ են քարերը մոռացել քայլելը. Երևի տարիքը արածը արել է:
4) Մի հավք ծկլթաց ծառի սաղարթում, Վախից վայր ընկավ ծաղիկը ձեռքից:

28 **Նշվածներից ո՞րը *չկա* ստորև բերված հատվածում (հատվածը կետադրված չէ):**

Մարդը որ ամեն անգամ հայտնվում էր բեմում ներկայացնելու արտիստի անելիքը չհայտնվեց: Ծափերը բուռն ու պահանջող չէին դադարում: Վերջապես բեմ ելավ արտիստը կանգնեց բեմի կենտրոնում ժպիտներից ամենահրապուրիչը շուրթերին: Հանդիսականների արտիստի դեմքին գամված հայացքներում խտացավ անհամբեր սպասումը:

Արտիստն այս անգամ ընտրել էր տերյանական գոհարներից մեկը «Անդարձություն»:

1) դերբայական դարձված
2) բացահայտիչ
3) տրոհվող հատկացուցիչ
4) ստորոգյալի զեղչում

29 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Սկզբում նա թվարկում է արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սողունները:
2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտակները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

1) 4, 2, 3, 1
2) 4, 3, 1, 2
3) 3, 2, 1, 4
4) 4, 2, 1, 3

30 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Երազի նման գիշեր է այսօր,
Ու ձյուն է գալիս երազի նման.
Ճերմակ են դարձել դաշտերը բոլոր,
Մարմարե գիշեր՝ անեզր անսահման:

1) համեմատություն
2) մակդիր
3) շրջադասություն
4) անձնավորում

31 **Ո՞ր տողն է Նահապետ Քուչակի «Քանի՜ ու քանի՜ ասեմ» հայրենից:**

1) Թուխ ամպն այլ բամպակ արէ՛ք, ի ծաւէն դերձան քաշեցէ՛ք:
2) Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի:
3) Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկըրէ յերկիր թափեցաւ…
4) Մըտիկ իմ եարին արէք, զինչ հագեր՝ ամէնն է կանանչ…

32 **Ա. Բակունցի նշված պատմվածքներից որի՞ հերոսներից ոչ մեկը հանդես *չի* գալիս իր անձնանունով:**

1) «Խոնարհ աղջիկը»
2) «Միրհավ»
3) «Ալպիական մանուշակ»
4) «Մթնաձոր»

33 **Ի՞նչ երազ է տեսնում Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հերոս Թաթուլ իշխանը մատնության գիշերը:**

1) Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:
2) Ցին ու ագռավ լցվել են Թմկաբերդ:
3) Վիշապ օձը փաթաթվել է բերդին:
4) Նաղիր շահը սպանում է իրեն՝ Թաթուլին:

34 **Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

1) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
Անուրջում հոգիս կլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կգգվե տատասկին դժնյա:
2) Գնա՛, քարավա՛նս, ինձ հետդ քա՛շ տուր
Օտար, ամայի ճամփեքի վրա.
Ուրտեղ կհոգնիս, գլուխս վա՛ր դիր
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
3) Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա, մի չղջիկի պես թևերը փռեց,
Անծիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:
4) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
Թափառումների տենչով անմեկին…

35 **Ո՞րն է Դավթի և Փոքր Միհրի մենամարտի պատճառը «Սասնա ծռեր» էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր):**

1) Միհրին դուր չի գալիս, որ իրեն անծանոթ այդ ձիավորը ճանապարհն իրեն չի զիջում:
2) Միհրը զայրանում է, որ մի թուխմորուս մարդ իր ձիու վրա մի երիտասարդ աղջիկ է տանում:
3) Միհրը Դավթից պահանջում է նրա նժույգը և մերժում ստանում:
4) Միհրը, տեսնելով այդ ածդահա մարդուն, ուզում է իր ուժը փորձել՝ նրա հետ գոտեմարտելով:

36 **Ո՞ր ստեղծագործությունը հեղինակներից որինն է:**

ա. «Տրտունջք»	1. Պ. Դուրյան
բ. «Իրիկունը»	2. Մ. Մեծարենց
գ. «Հին աստվածներ»	3. Գ. Չոհրապ
դ. «Այինկա»	4. Լ. Շանթ

1) ա-2, բ-1, գ-3, դ-4
2) ա-1, բ-3, գ-4, դ-2
3) ա-2, բ-1, գ-4, դ-3
4) ա-1, բ-2, գ-4, դ-3

37 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանքում» Վարդան Մամիկոնյանը պարսիկներին դիմագրավելու համար նշվածներից ո՞րը *չի* առաջարկում հայ նախարարներին:**

1) Օգնության կոչ ուղարկել Վրաստան, Աղվանք և հունաց բաժնի հայ իշխաններին:
2) Դեսպանություն ուղարկել Բյուզանդիա՝ Պարսկաստանի հետ հաշտված այդ տերությանը համոզելու հայերին օգնելու անհրաժեշտությունը:
3) Բանսարկություններով թշնամանք լարել պարսից նախարարների մեջ և պարսիկ պաշտոնյաների մի մասին գրավել իրենց կողմը:
4) Ապավինել ռամիկի ուժին:

38 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե
2. Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
3. Արևն ամռան ու ձմռվա վիշապաձայն բուքը վսեմ
4. Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում

1) 3, 2, 4, 1
2) 1, 3, 2, 4
3) 3, 2, 1, 4
4) 1, 4, 3, 2

39 **Տրված բառերից քանիսի՞ բոլոր վանկերն են բաց.**

հոլանի, գեղանի, անհարկի, եղրևանի, բրածո, վերարկու, դեռատի, հիանալի, վայրենի, ունելի, պիտանի, քառակի:

40 **Տրված բառերից քանի՞սն ունեն հետևյալ կազմությունը՝ *արմատ+հոդակապ+արմատ.***

նախագահ, որմնասյուն, գերակշիռ, սակագին, ամենատես, երկրեերկիր, դասացուցակ, ներաշխարհ, շրջակա, հարաճուն:

41 **Տրված հատվածում քանի՞ ածական կա:**

Այն պահին, երբ Վարդը մտածում էր այդ ծանր առաքելության մասին, Արշակ թագավորը, շարունակելով իր անհանգիստ երթևեկը, խորհում էր դարձյալ Գնելի մասին: «Պետք է կանչել մայրաքաղաք և զրուցել հետը,- մտածում էր նա:- Թեև ընդունված կարգ չէ, բայց գուցե հանձնենք նրան մի բարձր պաշտոն արքունիքում. այդպես նա չի առնչվի դժգոհ նախարարների հետ»:

42 **Նախադասություններից քանի՞սն են համառոտ:**

- Սրտապնդիչ էր նախարարի խոսքը:
- Սուրը չպիտի բարձրանա մեզ վրա:
- Իրոք, կախարդական է բնությունը:
- Անշուշտ, տարակուսանքները գլուխ էին բարձրացրել:

43 **Քանի՞ բութ պիտի դրվի տրված հատվածում:**

Տասներեքերորդ դարում օրըստօրե փթթող Անի քաղաքում հարուստ ու ինքնագոհ մի իշխան էր ապրում Անանիա անունով: Նա ուներ մի քնքուշ դուստր դեղձան ծամե-րով կապույտ աչքերով: Աղջիկը ցանկանալով գրավել բոլորի ուշադրությունը հաճախ ճեմում էր հոր ապարանքի քարե պատշգամբում: Իր գեղեցկությամբ ու ազնվազարմ նազանքով նա հմայում էր անցորդներին և ամենքը ամեն ինչ մոռացած նայում էին նրան:

44 **Տրված ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Պ. Սևակը.**

«Գանգրահեր տղան», «Եվ այր մի՝ Մաշտոց անուն», «Երկիր Նաիրի», «Խոսք իմ որդուն», «Վարք մեծաց», «Դեպի լյառը Մասիս», «Անլռելի զանգակատուն», «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Եղիցի լույս», «Տաղարան»:

45 **Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա:**

1. հափշտակել, 2. վարքաբեկել, 3. գաղտագողի, 4. ամբասիր 5. մտածածին, 6. բաղդատել, 7. հյուլէ, 8. զոջալ, 9. անդորագիր:

46 **Ո՞ր նախադասություններում է ընդգծված բառը գործածված փոխաբերական իմաստով:**

1. Մի զարմանալի թախծոտ կյանք էր **կանաչում** դեմը:
2. Կարկաչահոս աղբյուրն այնտեղ Թավալում էր **մարգարիտ:**
3. Զուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ, Գարո՛ւն, ամեն տեղ նոր կյանք **ես վառել**:
4. Նայում եմ, մինչև որ անզոր Գլուխս ծնկիդ **է թեքվում:**
5. Մենք կժպտանք, գո՜հ **կժպտանք** մեռնելիս, Որ երազում երազեցինք ու անցանք:

47 **Ո՞ր շարքերում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ կա:**

Հենց անցնում է գիշերը, և արեգակի առաջին ոսկեզօծ շողերն ընկնում են մարմինդ սարսռեցնող ցրտից սառած ժայռերին, քարակաքավը ինչ-որ որձաքարի բեկորի վրայից սկսում է երգել:

1. **մարմինդ**–ստացական հոդով գոյական, **վրայից**–տեղի մակբայ
2. **սարսռեցնող**–պատճառական բայ, ենթակայական դերբայ, **երգել**–վաղակատար ձևաբայ
3. **ոսկեզօծ**–ածական, **ընկնում են**–սոսկածանցավոր բայ, չեզոք սեռ
4. **ինչ-որ**–անորոշ դերանուն, **սառած**–***ե*** խոնարհման պարզ բայ, հարակատար դերբայ
5. **հենց**–սաստկական վերաբերական, **գիշերը**–***վա*** հոլովման գոյական

48 **Նախադասություններից որոնցո՞ւմ է ընդգծվածը դերբայական դարձված:**

1. **Կամրջի վրայով անցնելիս** աջ ու ձախ չէր նայում:
2. Անհրաժեշտ էր **մի քանի օրով գյուղ գնալ:**
3. Այգեպանը սկսեց **այգին մշակել:**
4. Ծերունին թափ տվեց ոտքերի փոշին և **առանց շրջվելու** հեռացավ քաղաքից:
5. Գնացքի շոգեկառքը զարդարել էին **փողփողացող ալ դրոշներով:**

49 **Վ. Տերյանի ստեղծագործության վերաբերյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1. «Մթնշաղի անուրջներ» շարքը բացվում է «Fatum» բանաստեղծությամբ:
2. «Երկիր Նաիրի» շարքում տեղ են գտել ինչպես հայրենիքին, այնպես էլ մորը նվիրված բանաստեղծություններ:
3. «Կարուսել» բանաստեղծության մեջ Տերյանը խոսում է սիրո զգացմունքի մասին, որը ձանձրալի լինելու աստիճան միշտ նույնն է ու կրկնվող:
4. «Հրաժեշտի գազելում» բանաստեղծը տխրությամբ հրաժեշտ է տալիս իր սիրած էակին, որից պետք է անորոշ ժամանակով բաժանվի:
5. «Իջնում է գիշերն անգութ ու մթին» բանաստեղծությունն ավարտվում է հայրենիքի ճակատագրի վերաբերյալ մռայլ կանխատեսումներով:

50 **Ո՞ր հատվածներն են միջին հայերենով:**

1. -Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
   Պար չես բռնում մանկական,
   Դու դեռ ծովը չի հասած՝
   Սգավոր ես ինձ նման:
2. Ցորեկն եմ նետի նըման,
   ուր նետեն, ես ի հոն կենամ.
   Գիշերն՝ աղեղան նըման,
   ես լարթափ՝ ի վար կու մընամ:
3. Դեղի՛ն վարդեր մայիսի,
   բուրումներով խնկավետ
   թալկության մը մեջ հավետ
   կը տժգունին մեկուսի:
4. Ձիմ եարն ամանաթ կու տամ.
   ի վարդին մէջն պահեցէք.
   Թէ երթամ ու շուտով դառնամ,
   զամանաթս ի տէ՛ր հասուցեք…
5. Ես այգերով ու ցայգերով
   Հաճախ մենակ կ՚անրջեմ
   Անհնարին, երկնագորով
   Սեր մը, որուն տերը չեմ:

Բ մակարդակ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) հանել(բերել), դուռ(դռան), կրակ(ու)բոց, օրն(ի)բուն
2) դեմ(դիմաց), հաշտ(ու)համերաշխ, գալ(լցվել), տնե(տուն)
3) ձեռք(բերել), Նոր(Նորք), կիսով(չափ), ի(փառս)
4) առ(այն), հինգ(հարկանի), վաղուց(ի)վեր, ձեռք(ձեռքի)

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:**

1) կուսակցական, կրափոշի, առաջատար
2) թիավարել, ալեծուփ, մշտադալար
3) մորաքույր, մտադրություն, տղամարդ
4) փախստական, ավարառու, կետորսանավ

53 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) գիշատել-բզկտել, լայնախոհ-ազատամիտ
2) թեական-կասկածելի, անաչառ-անկողմնակալ
3) աղետ-արհավիրք, ամբարտավան-սնապարծ
4) գողտրիկ-թաքուն, բանսարկություն-սադրանք

54 **Ո՞ր շարքում կրկնավոր բարդություն *չկա:***

1) նետ-աղեղ, անթիվ-անհամար, կենաց-մահու
2) մեկ-երկու, աման-չաման, աղմուկ-աղաղակ
3) տուն-թանգարան, մարդ-մուրդ, տղա-աղջիկ
4) ճեփ-ճերմակ, այսօր-վաղը, դուռ-դարպաս

55 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) Նա միայն սպառնում է ձեր արքային, բայց հարձակվել չի համարձակվի:
2) Նա հազիվ էր զսպում իրեն, որ ձայնը չբարձրացնի:
3) Սպասավորներից մեկը բուռ հայացքով նայում էր դռանը՝ ըստ երևույթին քունը հաղթահարելով:
4) Այո՛, Լուսինե Զաքարյանից լավ դժվար է հոգևոր երգ կատարել:

56 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Հակոբը տեսավ, որ անծանոթը քաղաքը լավ չգիտի:
2) Նա լավ էր հասկանում, որ ճրագը վառ պահողը որդին է լինելու:
3) Ինձ թվաց, թե սպիտակ տան ներսում մեկը գոռգոռում էր և ոտքը խփում գետնին:
4) Հետո առաջս են գալիս ուրիշ պատկերներ, ու լսում եմ ընտանեկան կյանքի զվարթ աղմուկը:

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են համապատասխանում նշված տեսակին:**

1) ցավագին, քաջաբար, արդյոք – *նյութական*
2) գեթ, հարկավ, իրոք – *վերաբերմունքային*
3) նախքան, քանակ, քանի որ – *քերականական*
4) վերաբերյալ, շնորհիվ, խստիվ – *քերականական*

58 **Ո՞ր տարբերակում հատկացուցիչ *չկա:***

1) Ոսկի բոցեր են դառնում ամպերը Նրանց բորբոքուն խարույկներին…
2) Երեխի նման խաբեցին ինձ շատ, Երազուն ու խենթ երեխի նման…
3) Կանչում է կրկին, կանչում անդադար Էն չքնաղ երկրի կարոտը անքուն…
4) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար:

59 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

-Ի՞նչ ուժով պիտի հաղթես արաբներին, Մարզպետունի՛ իշխան. մենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունենք,- հարցրեց թագուհին երկյուղած:

1) Թագուհին երկյուղած հարցրեց, թե Մարզպետունի իշխանը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
2) Թագուհին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
3) Թագուհին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե ինքը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
4) Թագուհին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:

60 **Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասության պաշտոնը սխալ նշված:**

1) Ծիծաղախիտ ծովի ծփանքն այնքան կենարար էր, որ ճակատագրից հալածված մարդիկ մի վայրկյան կարծես մոռացության տվեցին իրենց տառապանքը: *(չափի պարագա)*
2) Նրան թվում էր, թե ինքը ժամանակից ու տարածությունից դուրս էր մղված: *(ենթակա)*
3) Բոլորիս երազանքն այն է, որ մեր հինավուրց երկիրը հզորանա: *(ստորոգելի)*
4) Այժմ նա հալածվում էր նրանցից, ովքեր ժամանակին աջակցել էին իրեն: *(անջատման անուղղակի խնդիր)*

61 **Ո՞ր պնդումն է սխալ:**

1) Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի սկզբում հեղինակն ասում է, որ մայր ձին բնազդով վտանգ էր զգացել այն ժամանակ, երբ դեռ գայլի ո՛չ հոտն էր զգացվում հովտում, ո՛չ ձայնն էր լսվում:
2) Հ. Շիրազը «Թագադրում» բանաստեղծության մեջ ներկայացնում է բնության հզոր ուժերի առջև թույլ մարդու անզորությունը:
3) Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը պատկերում է աքսորյալների տառապանքը Սիբիրում:
4) Հ. Սահյանի «Պապը» բանաստեղծությունն ավարտվում է մարդու և բնության միաձուլման պատկերով:

62 **Հ. Պարոնյանի նշված ստեղծագործություններից ժանրային առումով ո՞րն է *դիմանկարների շարք:***

1) «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ»
2) «Պաղտասար աղբար»
3) «Ազգային ջոջեր»
4) «Քաղաքավարության վնասները»

63 **Տրված բառերից քանի՞սն են կազմությամբ պարզ.**

նզովք, փափուկ, բամբակ, երազկոտ, ճակատ, գունատ, դժխեմ, լցոն:

64 **Մտքերից քանի՞սն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Դարեր շարունակ մարդիկ փորձել են ստեղծել տարածության չափման միավորներ: Ոտնահետքերի միջև եղած հեռավորության չափումից առաջացել է ոտնաչափը, արմունկից մինչև միջնամատի ծայրը չափից՝ կանգունը և այլն:

Դրանցից մեծ միավորների առաջացումը կապվում է հողաբաժանման հետ. հողագործը պետք է համոզված լիներ, որ իր հողակտորը իրեն հասանելիքից ավելի փոքր չէ: Սկզբնական շրջանում ոտնաչափերով չափվող հողակտորներն ակնհայտորեն անհավասար էին, քանի որ չափողի հասակից կախված՝ ոտնաչափը կարող էր տարբեր լինել: Բավական երկար ժամանակ չափման խնդիրը լուծել է եգիպտական կանգունը, որի չափը սահմանվեց ըստ թագավորի բազկի երկարության: Դրա գրանիտե բնօրինակը պահվում էր պալատում:

Այնուհետև ֆրանսիացի հեղափոխականները ստեղծեցին մետրը, որի՝ որպես չափման միավորի, հիմքում դրված էր Հյուսիսային բևեռից մինչև հասարակածն ընկած հեռավորության 10 միլիոներորդ մասը:

*Արեգակնային համակարգում չափումներ իրականացնելու համար չափման միավոր ընդունվեց Երկրից մինչև Արեգակ միջին հեռավորությունը: Ավելի մեծ տարածությունների համար օգտագործվում է **լուսատարի** հասկացությունը: Դա այն հեռավորությունն է, որը լույսն անցնում է մեկ տարվա ընթացքում բացարձակ վակուումում:*

- Գոյություն ունեցող չափման միավորների առաջացման հիմնական դրդապատճառներից մեկը կապվում է հողագործության հետ:
- Արեգակնային համակարգում չափումներ իրականացնելու համար որպես չափման միավոր ընդունում են Երկրին համեմատաբար մոտ գտնվող երկնային մարմինների չափերը:
- Ֆրանսիացի հեղափոխականների առաջարկած մետրը կազմում է հասարակածի 10 միլիոներորդ մասը:
- Եգիպտական կանգունի՝ որպես չափման միավորի, ընդունումից հետո ամենուրեք հողաչափության ժամանակ օգտագործվում էր կանգունի գրանիտե բնօրինակը:
- Լուսատարին ոչ թե տարածության, այլ ժամանակի չափման միավոր է:

65 **Նախադասության անդամներից քանիսի՞ շարահյուսական պաշտոնն է ճիշտ նշված:**

Չինացիները խոսում են իրարից խիստ տարբեր յոթ բարբառներով, որոնք բոլորովին էլ հասկանալի չեն այլ բարբառով խոսողին:

- **յոթ** – որոշիչ
- **որոնք** – ուղիղ խնդիր
- **խոսողին** - հանգման անուղղակի խնդիր
- **հասկանալի չեն** - բաղադրյալ ստորոգյալ
- **խիստ** - որոշիչ

66 **Ո՞ր նախադասություններում ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ձորի բերանին կտրուկ զառիթափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:
2. Գերանը չկոտրվեց կացնով ուժգին հարվածելուց հետո և սղոցով կտրեց:
3. Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:
4. Նրան թվաց ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ ինչպես աղբյուրի վճիտ ջուրը:

67 **Ո՞ր բառերում արմատի հնչյունափոխություն կա.**

1. թրթռալ, 2. տխրություն, 3. փախստական, 4. վարչապետ, 5. սանրվածք, 6. սիգաճեմ, 7. վիմագիր, 8. հնագետ, 9. ընդեղեն:

68 **Որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).**

1. նպաստեց, 2. հիմնում է, 3. կառչելով, 4. փախչելիս, 5. կտրտեց, 6. ելնում է, 7. մեծանում եք, 8. բարձրացրեց, 9. մոտենա:

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ես, դու, նա, ինքը*** դերանունները եզակի թվում ունեն ձևով միմյանցից տարբերվող սեռական և տրական հոլովաձևեր:
2. Բոլոր ժխտական դերանունները հոլովվում են:
3. ***Այս, այդ, այն*** ցուցական դերանունները մատնանշում են և՛ առարկա, և՛ առարկայի հատկանիշ:
4. Ի տարբերություն հարցական դերանունների՝ հարաբերական դերանունները նախադասության անդամ չեն դառնում:
5. ***Ով*** դերանունը հոլովվում է միայն եզակի թվում:
6. Փոխադարձ դերանունները չեն կարող կատարել ենթակայի պաշտոն:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բառասկզբի ***ու, ի, է(ե)*** ձայնավորները մի քանի բառերում հնչյունափոխվում են ***ը***-ի:
2. Եթե գաղտնավանկով վերջացող բառի վերջից որևէ մասնիկ է ավելանում, ապա գաղտնավանկի ***ը***-ն պարտադիր սղվում է:
3. ***Յա*** երկհնչյունը հնչյունափոխվելիս դառնում է ***է(ե):***
4. Բառամիջի և բառավերջի ***ե***-ն միշտ հնչյունափոխվում է:
5. Բառասկզբի ***ը***-ն երբեք չի հնչյունափոխվում:
6. Բաց վանկի ***ու*** ձայնավորը միշտ հնչյունափոխվում է ***վ***-ի: